
ՊՐԱՀԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ
(1920–1930-ական թվականներ)

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

Արևելյան Եվրոպայի ժողովուրդների հետ հայ ժողովրդի պատմամշակութային առնչություններն ամենից սակավաթիվը եղել են չեխերի և սլովակների հետ, որոնք մինչ օրս մեծ մասամբ գրեթե անհայտ են մնում նույնիսկ պատմաբաններին¹: Առաջին հայերը Պրահայում և Չեխոսլովակիայի տարբեր քաղաքներում հաստատվել են 1910-ականներին: Նրանցից Արթին Ասլանյանին է պատկանել Պրահայի առաջին գորգագործական ֆիրման, որը գտնվել է քաղաքի կենտրոնական պողոտայի վրա, մի առաջնակարգ հյուրանոցի շենքում: Մեկ այլ հայ՝ վանեցի Դ. Սահակյանը, հավանաբար, 1910-ականներին, Վլտավա գետի ափին կառուցել է մի մեծ և շքեղ մենաստուն, ժամանակին, թերևս, ամենաշքեղը Պրահայում²: Հայերը զբաղվել են նաև աղիքի, արևելյան ուտեստների առևտրով, իսկ մի հայ Պրահայում զբաղվել է պանրագործությամբ³:

XX դարասկզբին Չեխիայում հայտնվել են նաև առաջին հայ ուսանողները⁴: Չեխ հռչակավոր ջութակահար Օտակար Շևչիկը (1852–1934) ունեցել է հայ ուսանողներ, եղել հայ եկեղեցական և ժողովրդական երաժշտության ու Կոմիտաս վարդապետի մեծ երկրպագու⁵: Նրան աշակերտել է հայ տաղանդավոր ջութակահար Դավիթ Դավթյանը (1880–1911): Վերջինս աշակերտել է նաև չեխ ջութակահար և կոմպոզիտոր Յան Կուբելիկին (1880–1940): Դավթյանը մի քանի անգամ ելույթներ է ունեցել Պրահայում: Ավետիք Իսահակյանի վկայությամբ, «նրան ամենից շատ սիրում էին արտասահմանում. օրինակի համար՝ երաժշ-

¹ Այլապես «Հայ Սփյուռք» հանրագիտարանում (Երևան, 2003), «Չեխիա» բաժնում (էջ 434–435) գտնե համառոտակի կներկայացվեին հայ-չեխական պատմական առնչությունները: Այնտեղ միայն հիշատակվել է XVII դարում Պրահայի առաջին սրճարանատեր դամասկոսցի Գևորգի անունը, որի ստույգ ազգային պատկանելությունն էլ, ի դեպ, կասկածելի է:

² Ե. ր. Հ ա յ կ ա զ ն. Հայ կյանքը Փրակայի մեջ. – «Հայրենիք», 1. I. 1924:

³ Փ ր ա կ ա ց ի. Հայ և չեխ հնագույն և նորագույն հարաբերությանց մասին. – «Արևելք», 22–23. 05. 1933:

⁴ 1920–1930-ական թվականներին Պրահայի հայ ուսանողները թեման հայ մամուլում, պատմագիտության, հուշագրության մեջ բավականին հոլովված, բայց գրեթե չուսումնասիրված երևույթ է: Սույն ուսումնասիրությամբ մենք առաջին անգամ կփորձենք առկա փաստական նյութի հիմամբ տալ պրահաբնակ հայ ուսանողության պատմությունը՝ հիմնված հիմնականում սփյուռքահայ մամուլում ցրված տեղեկությունների, ինչպես նաև հուշագրական գրականության հիման վրա: Հատկապես արժեքավոր է այդ ուսանողներից Ռ. Կարապյանի «Մի տարի Պրագայում» հոդվածը, հրատարակված Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում (տե՛ս «Հայրենիք», 17–18, 20–21. I. 1925):

⁵ Փ ր ա կ ա ց ի. Օթոգար Շևչիք հիացող մըն էր հայ երաժշտության և Կոմիտասի. – «Արևելք», 29. 01. 1934:

տական Պրագայում»⁶: Շեչիկի մոտ, Պրահայում, կատարելագործվել է նաև ջութակահար Հայկ Կյուտենյանը (1886–?), որը նաև կոմպոզիցիա է ուսանել չեխ մանկավարժ Վ. Նովակի մոտ⁷: Ի թիվս եվրոպական տարբեր քաղաքների, Կյուտենյանը մենահամերգներով հանդես է եկել նաև Պրահայում:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո նորաստեղծ Չեխոսլովակիան նախաձեռնել է տարբեր երկրների երիտասարդների պետական կրթաթոշակով Պրահայի բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանելու գործը: Վրացիները հաջողեցրել են ավելի կանուխ օգտվել այդ հնարավորությունից՝ Պրահայում ունենալով պետության հաշվին սովորող մի քանի ուսանողներ⁸: Ի դեպ, 29 ռուսաստանցի հայեր որպես ուսանող գրանցվել են Պրահայի համալսարանում՝ ներկայանալով իբրև ռուս կամ վրացի: Բսկ 1921-ի աշնանը մի պոլսահայ, իմանալով Չեխոսլովակիայի կառավարության այդ քայլի մասին, հաջողեցրել է յոթ հայ երիտասարդների տեղավորել Պրահայում:

1923 թվականին, իր անկախությունը կորցրած Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը, տեսնելով, որ Չեխոսլովակիան հազարավոր երիտասարդներ է ընդունել իր սահմաններից ներս և նրանց պետական թոշակով սովորելու հնարավորություն է տալիս, միտք է հղանում իր կողմից ևս դիմում կատարել՝ որոշակի թվով հայ ուսանողների ընդունել տալու համար: Պատվիրակության ներկայացուցիչ Ալեքսանդր Խատիսյանը մեկնել է Պրահա՝ բանակցությունների: Չեխական կողմը նրան արժանացրել է սիրալիր ընդունելության և հոժարել հիսուն հայ ուսանողների պետական հովանավորությամբ Պրահայի համալսարաններում կրթվելու հնարավորություն տալ: Այդ հարցում Ա. Խատիսյանին մեծապես աջակցել է Չեխոսլովակիայի Հանրապետության նախագահ Տոմաշ Մասարիկը⁹, հայ ժողովրդի բարեկամ, «Հայ որբերին օգնող չեխոսլովակյան միության» հիմնադիր, հայոց տարագրության սարսափները պատկերող «Արևելքի սարսափները» (1923) գրքի հեղինակ Կարել Հանսսան և տեղացի ուսանողներից մի քանիսը: Չեխոսլովակիայի արտաքին գործերի նախագահի տեղակալ Կիրզան ասել է հայ պատվիրակությանը. «Կը ճանչնամ ձեր ցեղը: Գիտեմ անոր տխուր ճակատագիրը և բարձր արժանիքները: Կարելիս պիտի ընեմ, որ հայ ուսանողներն ալ օգտվին այս պատեհութենեն պետք եղած

⁶ Ա. վ. Բ. ս. ա. հ. կ. յ. ա. ն. Դավիթ Դավթյան.– «Հորիզոն», 1. V. 1911:

⁷ Ա. Յ. ի. ց. ի. կ. յ. ա. ն. Հայկական աղեղնային արվեստը, Երևան, 1977, էջ 134:

⁸ Տես Ս. Մ. Վրացիներ տարագրության մեջ.– «Հայրենիք», 5. VIII. 1925:

⁹ Չեխոսլովակիայի առաջին նախագահ, չեխական ազգային պայքարի և անկախության մեծ ռահվիրա, պետական-քաղաքական ակնավոր գործիչ Տոմաշ Մասարիկը (1850–1937) որոշակի դեր է խաղացել այդ շրջանում չեխ-հայկական կապերի զարգացման մեջ: «...Չեխիո Մեծ Զավակը դեր ունեցած է մեր կյանքին մեջ նաև իբրև ուսուցիչ և զաղափարախոս,– գրվել է հայ մամուլում հրատարակված նրա մահախոսականում:– Մասարիկի գլխավորած պետությունն էր – միակը ամբողջ Եվրոպայի մեջ – որ Հայաստանի 50 հայ ուսանողներ հյուրընկալեց և պետական հաշվով անոնց բարձրագույն կրթության տվավ» (Հանգուցյալ Մասարիկ և հայերը.– «Արագ», 3. X. 1937: Տես նաև «Նախագահ Թ. Մասարիկ».– «Հայրենիք», 23. I. 1936): Նույն մահախոսականում նշված է, որ Մասարիկն անձամբ ծանոթ է եղել հայ ազգային-հասարակական գործիչ Արմեն Գարոյի (Գարեգին Փաստրմաճյան) հետ և նրա հետ համագործակցությամբ որոշ ժամանակ աջակցել է Հայ Դատին:

չափով, ինչպես վրացիք և ուրիշներ»¹⁰: Եվ նա կատարել է իր խոստումը: Հիսուն հայ ուսանողների Կիրզան պաշտոնապես ընդունել է 1923 թ. օգոստոսին: Հաջողվել է բոլորին էլ թողնել Պրահայում և չուղարկել այլ քաղաքներ: Ամսական նպաստից բացի չեխական կառավարությունը հոգացել է նաև հայ ուսանողների հագուստեղենի (զգեստներ, կոշիկ, սպիտակեղեն), դպրոցական դասագրքերի, արձանագրությունների և քննությունների ծախսը՝ յուրաքանչյուր ուսանողի վրա ամսական ծախսերով յոթից ութ հազար չեխական կրոն¹¹: Հայ ուսանողների տարեկան ընդհանուր ծախսը կազմել է 300 հազար ֆրանկ, որ ամբողջովին հոգացել է չեխոսլովակյան կառավարությունը¹²:

Պրահայում ուսանած Ռ. Կարապյանի (հավանաբար Կարապետյան) վկայությամբ՝ Խատիսյանն իր բանակցություններն ավարտելուց հետո հայաստանյան պատվիրակության ներկայացուցիչ է նշանակել մի հայ ուսանողի, որը 1921-ից արդեն ուսանելիս է եղել Պրահայում և ծանոթ է եղել տեղական պայմաններին: Այդ հայ ուսանողը՝ Նշան Մարտիրոսյանը (հետագայում՝ հայագետ-խեթագետ), սկզբնական շրջանում հոգ է տարել Չեխոսլովակիա ժամանող հայերին: Վերջիններս եղել են տարբեր երկրներից, հիմնականում՝ Իրանից և բոլորն էլ՝ դաշնակցական կամ նրան համակիր և հարող շրջանակներից: Եղել են նաև Հնդկաստանից, Իրաքից, Սիրիայից, Եգիպտոսից, Բուլղարիայից, Գերմանիայից, Ավստրիայից, Ֆրանսիայից, Ռուսիայից և Թուրքիայից: Ոմանք ժամանել են ընտանիքի անդամների հետ: Այդ ընտրված հիսուն հայորդիների ցանկը հրատարակվել է ժամանակի մամուլում: Մարտիրոս Մասունցու վկայությամբ, իրենից բացի 1922-ին Պրահայի համալսարան են ընդունվել Վիեննայից Հովհաննես Ալիսյանը, Բուլղարիայից Հրանդ Տեյեջյանը, Սուրեն Բաբախյանը, Երվանդ Քոչյանը, Ահարոն Տատուրյանը, իսկ մնացածը կովկասահայեր են եղել¹³: Նա Պրահայում ուսանող հայերի մեջ հիշել է նաև Գարեգին և Հայկ Ասատրյանների անունները¹⁴:

Հետագայում իրանահայ թատրոնի դերասան և բեմադրիչ Մանվել Մարությանը նույնպես ուսանել է Պրահայում, նա ընդունվել է գյուղատնտեսական համալսարան, քանի որ պետք է գործնական մասնագիտություն ընտրեր. պետական օրենքով իրավունք չուներ հետևել սիրած ասպարեզին՝ թատերական արվեստին: Ինչպես նա վկայել է իր հուշերում, չեխական կառավարությունը տար-

¹⁰ Ե. ր. Հ ա յ կ ա գ ն. Հայ կյանքը Փրակայի մեջ. «Հայրենիք», 1. I. 1924:

¹¹ Տ ո թ թ. Ն շ ա ն Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. Փրակայի հայ ուսանողները. «Ազատ միտք», 31. X. 1936:

¹² 50 հայ ուսանողներ ևս. «Հայրենիք», 31. VIII. 1923: Հիսուն հայ ուսանողների ցանկը տե՛ս՝ 1923-ի Փրակայի համալսարանը ընդունված հայ ուսանողներուն ցանկը. «Կ ա ր ո ճ Ե ր գ յ ա ն. Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1960, էջ 222:

¹³ Տե՛ս Մ. Մ ա ս ո ս յ ա ն. Սև օրագիր, Բեյրութ, 1957, էջ 265: Վերոհիշյալ Հրանդ Տեյեջյանը 1940-ականներին Բեյրութում խմբագրել է «Առավոտ» օրաթերթը: «Կորովի խմբագիր մը, իրավ մտավորական մը, որ հայրենադարձի տարիներուն (1946-1947) Պեյրութի մեջ ներգաղթի կոմիտեին նախագահն էր և ան ոչ միայն ժողովուրդը դրկեց հայրենիք, այլ՝ ինք ևս մեկնեցավ: Երևանի մեջ առավոտ մը «Առավոտ» ի խմբագիրը սպանված գտնվեցավ իր աղքատիկ անկողինին մեջ: Ոչ ոք չիմացավ պատճառը կամ ոճրագործին ինքնությունը» (Թ. Թ ո ր ա ն յ ա ն. Ուղևորություն դեպի Թայլանտ ու Չինաստան, Հայկա, 2004, էջ 120):

¹⁴ Մ. Մ ա ս ո ս յ ա ն. Սև օրագիր, էջ 267:

բեր երկրներից ուսանողներ էր ընդունել՝ ամերիկացի, ռուս, հայ, վրացի, ուկրաինացի և գերմանացի, բոլորն էլ պետության հաշվին. «Նպատակը... Քաղաքակա՛ն, թե՛ մարդասիրական: Այդ այնքան էլ կարևոր չէ: Մոտավորապես հիսուն հայ ուսանողներ եկել են զանազան վայրերից, տարիքը քսանից մինչև հիսուն»¹⁵:

Բնչպես նշել է Ռ. Կարապյանն իր հիշողություններում, «Երբ մտանք Բոհեմական սահմանը, մենք այնպես ուրախ էինք, ինչպես թե Անդրկովկասյան մյուս պետություններից մտնեինք Հայաստան: Ահա մի նոր ազատագրված ժողովուրդ և երկիր, որ նույնպես դարեր շարունակ հեծել է օտար լծի տակ»¹⁶: Մակայն, անշուշտ, ավելորդ է ասել, որ Ավստրո-Հունգարիայի լուծը չեխերի համար նույնը չէր, ինչ որ հայերի համար՝ օսմանյանը:

Չեխական իշխանությունները ժամանողներից վերցրել են հայկական անցագրերը՝ առանց բացատրության, և փոխարենը տվել են չեխական վկայական՝ մեկ տարի ժամկետով: Բնակարան վարձելը քաղաքում թանկ է եղել, ուստիև ուսանողները հաճախ միասին են ապրել, ոմանք էլ տուն են վարձել Պրահայից դուրս բնակավայրերում: Ավելորդ է ասել, որ նրանցից ոչ ոք սկզբնապես ծանոթ չի եղել չեխերենին, այդ իսկ պատճառով առաջին տարին զիջում են կատարել հայ ուսանողներին՝ թույլատրելով քննությունները հանձնել եվրոպական որևէ այլ լեզվով՝ դասախոսների համաձայնության դեպքում:

Չեխերը մեծ մասամբ չեն իմացել, թե ինչ ժողովուրդ են հայերը¹⁷: Նրանք հայերին հաճախ շփոթել են ռուսների ու ռումինացիների հետ, և ռուս ուսանողության հանդեպ իշխող անբարյացակամությունը տարածվել է նաև հայերի վրա: Մակայն երբ նրանց բացատրել են, որ իրենք ուրիշ ազգի ներկայացուցիչներ են, չեխերը փոխել են իրենց վերաբերմունքը՝ դառնալով ավելի սիրալիր և հետաքրքրվելով հայերի ու Հայաստանի մասին: Հայ ուսանողներին առաջին տարում հոգատարությամբ է շրջապատել անդրկովկասյան կրթական ընդհանուր վերահսկիչ Ռեուդովժը: Վերջինիս տիկինը մինչև 1924 թ. եղել է Ջալալօղ-

¹⁵ Մ. Մ ա թ ո թ յ ա ն. Երբ իջնում է վարագույրը, Թեհրան, 1972, էջ 5:

¹⁶ Ռ. Կ ա թ ա պ յ ա ն. Մի տարի Պրագայում. - «Հայրենիք», 18. I. 1925:

¹⁷ Մարտիրոս Մասունցին վկայել է, որ երբ ինքը դեղագործի պաշտոնով մեկնել է Նովե Բենակտի քաղաքը՝ աշխատելու, այդ քաղաքի մարդիկ «իրենց կյանքին մեջ ոչ չլսած և ոչ ալ որևէ տեղ կարդացած էին Հայերու մասին: ...Անոնցմե մեկը կը կարծե եղեր, թե Հայերը մոնկոլական տիպի մարդիկ են, ուրիշ մը կըսե եղեր թե Հայերը սևամորթ են, և այսպես զիս տեսնելու եկողներե ամեն մեկը միտք մը հայտնած էր Հայերու մասին: ...Իսկ դեղարանի տերը կը վախնա եղեր, որ ես այլանդակ մեկը ըլլալու եմ՝ տգեղ, սևամորթ, աչքերս, քիթ ու բերանս մոնկոլական... Ասոր համար կը մտածե եղեր. - Այսպիսի մարդու մը երեսը մարդ չի նայիր, դեղարանի հաճախորդները ուրիշ դեղարան կերթան և իրենց գործը կը քանդվի: Այս խոսակցություններեն ետք Տոքթ. Պենեշ, գարեջուրի գավաթը բարձրացուց, ներկաներուն առաջարկեց, որ իմ կենացը խմեն, ավելցնելով.

-Կը տեսնեք, թե ոչ որի ենթադրությունը տեղ չբռնեց. շատ վայելույ է և սիրուն մեր դեղագործը, միայն թե հասակը քիչ մը կարճ է,- ու բոլորը մեկ լիաթոք խնդացին: ...Ես սկսա աշխատիլ, և կարճ ժամանակէն շուրջս հավաքեցի քաղաքի լավագույն տարրերը: Ամեն կիրակի տեղ մը հրավիրված կըլլայի: Այդ ժողովուրդը ի նչ բուռն փափաք ուներ Հայերու և ամբողջ արևելքի ժողովուրդներու կենցաղի մասին տեղեկություններ ունենալու» (Մ. Մ ա ս ո թ յ ա ն. Մ ի ռ ա զ ի թ, էջ 271-272):

լիում, որտեղ աշխատել է որբանոցում և հայ մանուկների հետ իր կապվածության պատճառով չի կամեցել հեռանալ Հայաստանից:

1920-ականներին Պրահայում ուսանող հայորդիների թիվն անցել է 60-ը: Նրանցից ինը եղել են ռուսախոսներ, գործել միայն ռուսական շրջանակներում և որպես ռուսներ են ճանաչվել: Մնացած 51-ը համախմբվել են Հայ ուսանողական միությունում: Ի դեպ, նրանցից վեց հոգին միայն Խատիայանի պատվիրակության ցանկով չեն եկել, այլ անհատական դիմումներով: Ռ. Կարապյանի բնութագրմամբ՝ իրենց սերունդը թոթափել է նախորդ սերունդների ռոմանտիզմը և ավելի գործնական մասնագիտություններ է ձեռք բերել: Ահա նրա նշած 51 հայ ուսանողների սովորած մասնագիտությունների ընդհանուր պատկերը.

1. Գյուղատնտեսություն՝ 10 հոգի, 2. իրավաբանություն (ռուսաց լեզվով)՝ 8 հոգի, 3. փիլիսոփայություն՝ 7 հոգի, 4. բժշկություն՝ 6 հոգի, 5. մեքենագիտություն՝ 6 հոգի, 6. վաճառականություն՝ 5 հոգի, 7. երկրաչափ-կառուցող՝ 4 հոգի, 8. քիմիա՝ 4 հոգի, 9. ճարտարապետություն՝ 1 հոգի¹⁸:

Ամփոփելով իր հոդվածաշարը՝ Ռ. Կարապյանը նշել է, որ «մեր ուսանողությունը 1923–24 ուսումնական տարին, պարզ երես դուրս եկավ և նույնիսկ լավ համարում ստեղծեց իր ընդունակությունների մասին, որ պատիվ է բերում հայ ժողովրդին»¹⁹:

1924-ին «Հառաջում» գրվել է, թե Փարիզից Պրահա ուսումնառության նպատակով պետք է մեկնեն հետևյալ հայերը՝ օրիորդներ Հ. Չաքարյան, Ադամյան, պարոնայք Վ. Իսահակյան, Լ. Մելիք-Դադայան, Լ. և Վ. Ադամյաններ: Այդ կերպ, ըստ թերթի, Պրահայի հայ ուսանողների թիվը կհասնի 47-ի²⁰, ինչը, սակայն, ճշմարիտ չէ. արդեն տեսանք, որ հայ ուսանողների թիվն անցել է 60-ը:

1924 թ. մայիսի 28-ին Պրահայի հայ ուսանողությունը հանդիսավորությամբ նշել է Հայաստանի անկախության օրը, որին մասնակցել են բազմաթիվ օտարազգիներ, ինչպես նաև Պրահայի հայ համայնքի ներկայացուցիչներ, որոնց թվում՝ ՀԲԸՄ նախագահներ Բարիկյանը և Ասլանյանը: Հանդիսությունը կատարվել է քաղաքի ամենամեծ հյուրանոցներից մեկում, հայկական եռագույն դրոշի ներքո: Հանդեսի հիմնական կազմակերպիչներն են եղել ուսանողներ Եփրեմ Սարգիսյանը, Վահան Մինախորյանը և Արշալույս Տեր-Աստվածատրյանը: Հանդիսությունը բացվել է «Մեր հայրենիք» օրհներգով, որ կատարել է Պրահայի Հայ ուսանողների միության քառաձայն երգչախումբը: Ելույթներ են ունեցել Արշալույս Տեր-Աստվածատրյանը, Հայաստանի սոցիալ-հեղափոխական կազմակերպության կողմից՝ Վահան Մինախորյանը (երկուսն էլ՝ ռուսերեն), Սուրեն Բաբայանը, Մուշեղ Թամրազյանը: Հայ ուսանողական միության վարչության նախագահ Սարգիս Թորոսյանը հայերեն և ռուսերեն ելույթները թարգմանել է չեխերեն: Խոսք են ասել նաև Պրահայի վրացի ուսանողության անունից Ճանճավան, վրացական համայնքի պաշտոնական ներկայացուցիչ Այոլոն և սոցիալիստ Նակաշիձեն: Վերջինս խոսել է հայ-վրացական դարավոր

¹⁸ Ռ. Կ ա ր ա պ ե ա ն. Մի տարի Պրագայում.– «Հայրենիք», 21.1.1925:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Փրակա գացող նոր ուսանողները.– «Հայրենիք», 17. XII. 1924:

բարեկամությունից, մասնավորապես շեշտել Թամար թագուհու օրոք Իվանե և Ջաքարե սպասալարների մեծ դերը, որոնք նպաստել են Վրաստանի փառքին²¹: Հայ ժողովրդի հանդեպ ջերմ ելույթներով հանդես են եկել նաև Պրահայի ուկրաինացիների կողմից չորս հոգի, այդ թվում՝ Եվրոպայում Ուկրաինայի ներկայացուցիչ Մ. Ա. Սլավինսկին, Բելոռուսիայից երկու ներկայացուցիչ, Հյուսիսային Կովկասի լեռնականների կողմից Ահմեդ Ցալիկովը, ինչպես նաև լիտվացիների, Կուրանի և Արևելյան Եվրոպայի ազգերի ուսանողական կենտրոնական մարմինների ներկայացուցիչները: Վերջում Հայ Հեղափոխական Դաշնակցության մասին ընդարձակ զեկուցումով հանդես է եկել Ռուսաստանի սոցիալ-հեղափոխական կուսակցության առաջնորդ և Սահմանադիր ժողովի նախագահ Վիկտոր Չեռնովը²²:

1920-ականներին Պրահայում Չեխոսլովակիայի Հայ Ուսանողների Միությունից բացի գործել են Հայկական միությունը և Պրահայի Հայ Գյուղատնտեսական ուսանողական միությունը²³: Նրանք հաճախակի հավաքվել են, կազմակերպել միջոցառումներ, նշել ազգային տոները: Ստացել են տարբեր երկրների դաշնակցական մամուլ, հատկապես Բոստոնի «Հայրենիքը» և Փարիզի «Յառաջը»: Ուսանողներից ոմանք էլ աշխատակցել են մամուլին՝ Չեխոսլովակիային նվիրված նյութերով: Այսպես, Նիկոլ Բադայանը Պրագայի ծածկանունով դաշնակցության օրգան «Դրոշակ»-ում հրատարակել է «Նոր Արևելքի ընկերվարական միությունը» նյութը²⁴: Դոկտոր Հովհաննես Հախնազարյանը Չեխոսլովակիային նվիրված նյութերով աշխատակցել է Թեհրանի «Ալիք» օրաթերթին²⁵: 1925-ին Կ. Պոլսի «Մարմարա»-ում տպագրվել են Չեխոսլովակիային և չեխահայերին նվիրված հոդվածներ՝ «մեր սեփական թղթակիցեն» նշումով, որոնց հեղինակները հանդես են եկել Դ. Ա., Ա. Զօրի, Վ. Ստեյլի ծածկանուններով²⁶: Դժվար է ասել, թե այս ծածկանունները պատկանում են միևնույն անձին, թե տարբեր անձնավորությունների: «Հառաջում» Պրահայից ուղարկած թղթակցությամբ հանդես է եկել ծնունդով երևանցի Լևոն Մելիք-Դադայանը (1897–1937)՝ Լ. Նաիրցի ծածկանունով²⁷: Նույն թերթին, ինչպես նաև Բոստոնի «Հայրենիքին» Ռ. և Ռ. Կ. ծածկանուններով աշխատակցել է վերոհիշյալ Ռ. Կարապա-

²¹ Ռ. Կ ա ր ա պ յ ա ն. Հայաստանի անկախության տոնը Պրագայում.– «Հայրենիք», 26. VI. 1924:

²² Չեռնովի մասին մանրամասն տե՛ս՝ «Վիկտոր Չեռնովը Ամերիկայի մեջ».– «Հայրենիք», 24. II. 1929:

²³ «Յառաջ», 1. III. 1928:

²⁴ «Դրոշակ», 1927, № 8, էջ 253–255:

²⁵ Տես, օրինակ, դ ո կ տ. Հ. Հ ա խ ն ա զ ա ր յ ա ն. Մարզանքը Չեխոսլովակիայում.– «Ալիք», 13. II. 1936:

²⁶ Տես, օրինակ, Դ. Ա. Համայնավարական պարտությունը Փրակայի մեջ.– «Մարմարա», 24. II. 1925: Ա. Զ օ Ր ի. Չեխ համայնավարական կուսակցության պառակտումը.– «Մարմարա», 7. III. 1925: Վ. Ս տ ե լ ի. Դեպքեր Չեխ-Սլովաքիո մեջ.– «Մարմարա», 31. XII. 1925:

²⁷ Լ. Ն ա ի ր ց ի. Չեխական ընտրությունները. նախ կանարգեն, հետո կընտրեն.– «Յառաջ», 4. XII. 1925:

նր²⁸: Չեխիայում տեղի ունեցած կարևոր միջոցառումների վերաբերյալ «Հայրենիքին» պարբերաբար տեղյակ է պահել նաև Օննիկ Մխիթարյանը²⁹:

1925-ին Չեխոսլովակիայի Հայ ուսանողական միությունը նախաձեռնել է եվրոպահայ ուսանողության համագումար Պրահայում, որի օրակարգի առաջին և գլխավոր կետն է եղել «Եվրոպայի հայ ուսանողների մասնակցությունը Հայաստանի օգնության գործում»³⁰: Այդ առթիվ կոչ է հրապարակվել Փարիզի «Հառաջ» օրաթերթում³¹: Այն չի իրականացել՝ մեզ անհայտ պատճառներով: Նույն թվականին Պրահայում գործող «Հայ որբերին օգնող չեխոսլովակյան միությունը» կազմակերպել է մի երեկույթ, որտեղ հայ ուսանողները հանդես են եկել երգով ու պարով³²:

1928-ին Պրահայի ուսանողները մշակութային-կրթական նպատակով վիճակահատել են կազմակերպել³³: Նույն թվականին Փետրվարյան ապստամբության յոթերորդ տարելիցի առթիվ Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում Պրահայի ուսանողությունը հրատարակել է բողոքի կոչ՝ ընդդեմ Խորհրդային Հայաստանի «հստակորեն հայրենադավ քաղաքականության», որը ճնշում է երկրից անջատված Ախալքալաքի, Գանձակ-Ղարաբաղի, Շարուր-Նախիջևանի և հայկական Բորչալուի հայ բնակչության՝ մայր հայրենիքին միանալու ձգտումները՝ պահանջելով ազատ արձակել բոլոր այլախոհ բանտարկյալներին և արտրականներին, վերադարձնել զենքը ժողովրդին և Հայաստանին վերադարձնել նրանից իլված տարածքները, ինչպես նաև լայն բացել երկրի դռները տարագիր զանգվածների առջև³⁴:

Պահպանվել են տեղեկություններ 1928 թ. մայիսի 28-ի տոնակատարության վերաբերյալ: Հանդիսությունը կայացել է Պրահայի Օպերայի տանը՝ ՀՀԴ Պրահայի ուսանողական միության, տեղի հայ համայնքի և Պրահայի անկուսակցական ձեմարանական հայ ուսանողների միության նախաձեռնությամբ ու հայ, չեխ, ռուս, ուկրաինացի, բելառուս, վրացի և այլ ազգությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Չնայած վաղուց արդեն Հայաստանի մի մասում հաստատված էին խորհրդային կարգեր, Չեխիայում կղզիացած մի խումբ հայտորդիներ իրենց պարտքն էին համարում հիշել անկախության և պետականության վերականգնման այդ նշանակալից երկու տարին՝ 1918-1920 թվականները: Հանդիսությունը բացել է Երվանդ Քոչյանը, ուսանողները կատարել են «Մեր հայրենիքը»: Ելույթներ են ունեցել Վիկտոր Չեռնովը, Պրահայի հայ ուսանողների անունից՝ Նիկոլ Բադայանը (հայերեն), Լևոն Մելիք-Դադայանը (չեխերեն): Մյուս բանախոսներն էին ծերակուտական Վազները (չեխ ընկերվարական կու-

²⁸ Տե՛ս Պրահայից նրա ուղարկած թղթակցությունները՝ Նոր Արևելքի ընկերվարական լիգան և իր նախագիծը («Հայրենիք», 23. VIII. 1927), Նյու Յորքի ուսանողները Եվրոպայում («Հայրենիք», 8. X. 1925):

²⁹ Տե՛ս Օ. Մ ի թ ա ղ ա ն. Բանվորական օլիմպիականը Փրակայի մեջ. - «Հայրենիք», 13-14. VIII. 1927:

³⁰ Ուսանողական համագումար. - «Ապագա», 26. IX. 1925:

³¹ Եվրոպայի հայ ուսանողության. - «Յառաջ», 20. IX. 1925:

³² Հայանպաստ շարժումը Չեխո-Սլովաքիո մեջ. - «Մարմարա», 24. II. 1925:

³³ Փրակայի վիճակահատը. - «Յառաջ», 1. III. 1928:

³⁴ Փրակայի հայ ուսանողության բողոքը. - «Հայրենիք», 13. III. 1928:

սակցություն), Շապավալը (ուկրաինական սոցիալ-հեղափոխական կուսակցության ղեկավար), Գուրնիչը (Ռուսաստանի սոցիալ-հեղափոխական կուսակցություն), Չեռչիան (վրաց սոցիալ-դեմոկրատական կուսակցություն և Պրահայի վրացի ուսանողություն), Մագոմանը (Կովկասի լեռնականների ներկայացուցիչը) և այլք: Բոլորը կատարել են հայ ժողովրդի և ՀՀԴ-ի փառաբանումը: Հանդիսությունն ավարտվել է համերգով, նվագել են քամանչա, ուսանողներ Մարուսյանը և Վ. Հակոբյանը կատարել են հայկական երգեր: Միջոցառումներ կա է եղել 100-ից ավելի մարդ: Սույն ձեռնարկին «Չեսկե սլովո» պարբերականում անդրադարձել է նրա խմբագիր Շմեյկալը՝ «Կեցցե Հայաստանը» հոդվածով, «Պրավո լիդո» թերթում Օ. Ա. ստորագրությամբ մի հեղինակ հրատարակել է «Հայկական հանրապետության տասնամյակը» նյութը, իսկ Ստանիսլավ Նիկոլաուն «Նարոդնի պոլիտիկա» թերթում հանդես է եկել «Մայիսյան օրեր» վերնագրված լրատվությամբ³⁵:

1930-ին Պրահայի հայ ուսանողության երկու վարչությունները (կուսակցական և չեզոք) տոնել են Ավետիս Ահարոնյանի գրական գործունեության 40-ամյա հոբելյանը: Մայիսի 10-ին չեխական և գերմանական թերթերում հոդվածներ են հրատարակվել Ահարոնյանի կյանքի ու գործունեության մասին՝ լուսանկարով հանդերձ: Հանդիսությունը բացել է Ահարոնյանի համագրողացի Հ. Ղարիբյանը, որը ներկայացրել է գրողի կենսագրությունը և տվել նրա գրական գործունեության գնահատականը: Այնուհետև Ահարոնյանի մասին իրենց հիշողություններն են պատմել սոցիալ-դեմոկրատական կուսակցության գործիչ և Ահարոնյանի երբեմնի բանտընկեր Լևոն Մենախորյանը, Գեդամ Բյոսեյանը: Երաժշտական կատարումներով հանդես է եկել հայ ուսանողների երգչախումբը, ընթերցվել են Ահարոնյանի բանաստեղծություններից: Վերջում կարդացել են Պրահայի հայ ուսանողների ուղերձը Ավետիս Ահարոնյանին: Ստորագրված «Ապրիլ, 1930»՝ 30 ուսանող-ուսանողուհիների անունից: Այս պաշտոնական հանդեսից հետո Հայ ուսանողական միությունը ևս մեկ դասախոսություն է կազմակերպել՝ նվիրված Ահարոնյանի գրական գործունեությանը, որի ժամանակ դասախոսել է Ռուբեն Վարդանյան-Ռենը³⁶:

Թեև Պրահայի հայ ուսանողները ստացել են տարբեր երկրներից հայ մամուլ և կապի մեջ են եղել իրենց բնակած երկրների ու մյուս պետությունների հայագաղութների հետ, սակայն նրանք իրենց զգացել են կտրված համայն հայությունից: Այդ պատճառով նրանք երբեմն այցելել են հարևան երկրների հայագաղութները՝ մասնակցելու ազգային տարբեր միջոցառումների: Այսպես, 1925-ին ուսանողների մի խումբ Բուխարեստում, իսկ 1927-ին՝ Բեռլինում, մասնակցել է թատերական բեմադրությունների³⁷:

Պրահայի հայ ուսանողների կյանքի և գործունեության վերաբերյալ որոշակի պատկերացում են տալիս գրող Ռուբեն Վարդանյանի՝ 1920-ականներին Պրահայից «Հայրենիք» ամսագրին ուղարկած նամակները: Մի նամակում նա վկայել

³⁵ Թ ղ թ ա կ ի ց. Մայիս 28-ը Չեխո-Սլովակիո մեջ. - «Հայրենիք», 19-20. VI. 1928:

³⁶ Պ ռ ա գ ա ց ի. Յոբելյանը Փրակայի մեջ. - «Յառաջ», 22. V. 1930:

³⁷ Ուսանող դերասանները մեր մեջ. - «Նավասարդ», 1925, Բ տարի, Ե պրակ, էջ 159:

է. «Չեխական հայտնի թանգարանի վերահսկիչ-կառավարիչը մեր պրոֆեսորներից մեկն է, որի հետ ծանոթացա այն բանից հետո, երբ 14-րդ դարու իրենց հին ժամանակագիրներից մեկի քրոնիկը կարդաց լսարանում և ջերմ խոսքեր ասաց հայերի հասցեին: Թագալար անուն ժամանակագիրը շատ լավ վկայություն է տալիս մեր մասին, երբ խոսում է մահմեդականության մասին»³⁸: Ռ. Վարդանյանի վկայությամբ՝ 1930-ի շրջանավարտների թիվը մեկ տասնյակ էր. «Լինելով «հայ ազգի» սաներ և Հ. Յ. Դաշնակցության հովանավորյալներ, դիմում արին վերջինիս, որ նա մեզ ցրի գաղութներում, ըստ մեր մասնագիտությունների, վասն զի կուզեինք «ազգին» օգտակար լինել»³⁹: Այդ նպատակով Պրահա է ժամանել դաշնակցության բյուրոյի ներկայացուցիչ Արշակ Ջամալյանը, որը շրջանավարտներին տրամադրել է ճանապարհաձախս ուղարկելով տարբեր հայագաղութներ:

Այս շրջանում Պրահայի հայ ուսանողների նախաձեռնությամբ գրական «Չին» («Գործ») հանդեսում չեխերեն թարգմանությամբ լույս են տեսել ստեղծագործություններ հայ բանաստեղծներից, որ կատարել են հայ ուսանողները և հայերենին տիրապետող տեղացիները: Վերոհիշյալ Ռ. Վարդանյանը չեխերենից հայերեն է թարգմանել Տոմաշ Մասարիկի վերջին գրքույկը՝ «Սլավոնները պատերազմից հետո»-ն, որը որպես թերթոն լույս է տեսել «Հայրենիքում»⁴⁰: Այս աշխատությունը հակիրճ և ամփոփ ներկայացնում է սլավոնական ժողովուրդների ներքին և արտաքին քաղաքականությունը, նրանց հասարակական ու տնտեսական կյանքը, մշակութային միտումները, կրոնական և քաղաքական շարժումները, տարածքային վեճերը, նրանց փոխհարաբերություններն ու ազգային գաղափարները: Ի դեպ, իր այդ գրքույկում Մասարիկը, անդրադառնալով Եվրոպայի տարբեր ժողովուրդների և պետությունների, եկել է այն համոզման, որ, ի վերջո, պիտի ստեղծվեն, այսպես կոչված, Եվրոպայի Միացյալ Նահանգներ, ինչի շնորհիվ պիտի հաստատվի հավերժական խաղաղություն: Իր թարգմանության առթիվ Վարդանյանը նամակ է գրել Մասարիկին՝ տեղեկացնելով, որ թարգմանում է նրա գրքույկը, միաժամանակ տվյալներ է հաղորդել Պրահայի հայ ուսանողության և մոտ անցյալում հայ ժողովրդի կրած տառապանքների մասին: Այդ ամենը նա կապել է Մասարիկի գրքի բովանդակությանը, որի նպատակն է աշխարհի ժողովուրդներին առաջադրել հավերժական խաղաղության ծրագիր⁴¹: Մասարիկի այս աշխատությունը կրթիչ դեր է ունեցել հայ ընթերցողի համար, ուստի նսխալ չէ այն կարծիքը, որ հայ գործիչներից շատերն իրենց հանրային կրթությունն ստացել են Մասարիկի գիտական երկերի շնորհիվ⁴²: Ի դեպ, 1935-ին Ադել Բրեդինգի «Մասարիկ» աշխատությունը՝ Միրանուշ Եղիազարյանի ֆրանսերենից կատարած թարգմանությամբ, որպես թերթոն լույս է տեսել Թեհրանի «Ալիք» օրաթերթում (հուլիսի 21-ից օգոստոսի 29-ը ներառյալ): Առաջին համարում «Ալիքը» նաև Մասարիկի մասին կենսագ-

³⁸ Մեր աշխատակիցներու նամակները. – «Հայրենիք» ամսագիր, 1963, թիվ 8, էջ 8–9:

³⁹ Նույն տեղում, էջ 24:

⁴⁰ Տե՛ս «Հայրենիք», 11. III – 20. III. 1925:

⁴¹ Տե՛ս Մեր աշխատակիցներու նամակները, էջ 8–9:

⁴² Հանգուցյալ Մասարիք և հայերը, նույն տեղում:

րական տեղեկություններ է տվել՝ քաղված «Խորհրդային Հայաստան» օրաթերթից (1935-ի հունվարի 2-ի համարից):

Հայ ուսանողների ներկայությունը մեծ աշխուժություն է հաղորդել Պրահայի հայ կյանքին: «Բացառիկ կենսունակությունով ծաղկել սկսած է հայ կյանքը Փրակայի մեջ. գիտակից այն հույսերուն, որոնք կապված են իրեն: Մենք գիտենք Դորպատեն ի՛նչ լոյս ցաթեց մեզ: Փրակա՛ն ինչ պիտի տա արդյոք»⁴³, – հարցրել է հայ ուսանողներից մեկը:

Սակայն Պրահային վիճակված չէր երկրորդ Դորպատ դառնալ: Հայ ուսանողների մեծամասնությունը չի կարողացել այս բացառիկ առիթից օգտվել: Պրահայում ուսանող հայորդիների մի մասը, արդեն ուսանելու երկրորդ տարուց, սկսել է աստիճանաբար հեռանալ Չեխոսլովակիայից: Պատճառները տարբեր էին: Նախ, ուսանողների ընտրությունը լավ չի եղել. կուսակցականության չափանիշներով ընտրվել են պատահական մարդիկ, հաճախ արդեն տարիքով, նախկին զինվորականներ, քչերն են ունեցել երկրորդական կրթություն: Ոմանք չեն հարմարվել կլիմայական պայմաններին և տեղափոխվել են ավելի տաք երկրներ, ոմանք չեն կարողացել հաղթահարել լեզվական պատնեշը (մեծ մասը չի տիրապետել չեխերենին և գերմաներենին), ոմանց նեղել են տնտեսական պայմանները⁴⁴, իսկ ոմանք էլ չեն ցանկացել շարունակել հարկադրյալ ընտրված մասնագիտությունը: Այսպես, վերոհիշյալ Մանվել Մարուքյանը, գտնելով վիեննաբնակ մի հայ մեկենասի և անսալով իր ճշմարիտ կոչմանը, տեղափոխվել է Ավստրիա՝ թատերարվեստ ուսանելու: Արդեն 1925 թ. Պրահայից հեռացել են Եփրեմ Մարգիսյանը, Ահարոն Տատուրյանը, Անդրե Տեր-Օհանյանը, գնդապետ Կուռո Թարխանյանն իր ընտանիքով, Սուրեն Սահակյանը և Երվանդ Քոչյանը⁴⁵: 1928-ի հունիսին Ռ. Վարդանյանը գրել է. «Կամաց-կամաց Պրագան դատարկվում է մեր ուսանողներից»⁴⁶: Մեկ տարի հետո Պրագայում կարող են մնալ մեկ կամ երկու ուսանող, որոնց դասընթացքները հինգ տարուց ավելի են: Շատ դառնություն տեսանք Թավրիզից մինչև Պրագա, իսկ մեր ուսանողական տարիները անցան օրվա պես, արագ ու թեթև: Պրագան շատ բան փոխեց այն ուսանողների ուղեղում և սրտում, որոնք իրոք ծարավ էին գիտության կամ զգում էին իրենց անհատական պակասները: Շատերի վրա Պրագան մեծ ազդեցություն թողեց, նրանց կրթեց, մեղմացրեց և դարձրեց ժամանակակից մարդ:

Սակայն, չի կարելի ժխտել, որ Պրագան ունեցավ նաև շատ բացասական ազդեցություն մի քանի հոգու վրա, որոնք անկեղծ չեն իրենք իրենց հետ, հետևաբար նաև շրջապատի հետ: Ուրախալի է, որ այդպիսիները շատ քիչ են,

⁴³ Ե. ր. Հ ա յ կ ա գ ն. Հայ կյանքը Փրակայի մեջ:

⁴⁴ Պրահայի ուսանողներից մեկի՝ Բաղդիկ Մինասյանի դուստրը՝ Ռուբինա Փիրուսյանը, 2007-ի նոյեմբերի 13-ին մեզ ուղղած էլեկտրոնային նամակում վկայել է. «Կենսապայմանները շատ խեղճ էին, թոշակները՝ անբավարար և ոչ շատ պարբերական»:

⁴⁵ Տե՛ս Մեր աշխատակիցներու նամակները, էջ 9:

⁴⁶ Այդ իսկ պատճառով մեզ ճշգրիտ չի թվում 1930-ին հրատարակված այն տեղեկությունը, թե Պրահայում բնակվում են հարյուր հայեր, մեծ մասը՝ ուսանողներ, որոնք հետևում են բժշկության, իրավաբանության, փիլիսոփայության և ճարտարարվեստի (տե՛ս Ուսանողական գաղութ.– «Հայրենիք», 30. IX. 1930):

մեկ կամ երկու հոգի, նույն մարդիկ, նույն կրթությամբ, նույն հոգով ու բնավորությամբ:

Սկզբում մենք բոլորս հավատացած էինք, որ Պրագան կարող է դառնալ մեզ համար մի նոր Դորբաստ (*sic*), որտեղից դուրս պիտի գան նոր վերածնիչներ, նոր և տարբեր մարդիկ, մեր ժողովրդին միշտ օգտակար և նրա ցավերով ապրող ու տառապող: Հինգ և ավելի տարի հետո, բոլորս զգում ենք, որ մենք չարաչար սխալվել ենք և շատ ենք գերազնահատել (*sic*) մեր ուժերը, և, եթե կարելի է այսպես արտահայտվել, մեր հատուկ առաքելությունը:

Պրագայում կան մի քանի հոգի, որոնք արդեն հրապարակի վրա են, այս կամ այն կերպ արտահայտվում են: Մնացածներից դուրս կը գան միայն օգտակար քաղաքացիներ մեր նոր հայրենիքի ու վերածնվող հայրենիքի»⁴⁷:

Պրահայի հայ ուսանողների ցրվելուն նպաստել է նաև այն հանգամանքը, որ տնտեսական ճգնաժամի պատճառով չեխական կառավարությունը դադարեցրել է օժանդակությունը տարագիր հայ ուսանողներին: Դրա հետևանքով չորս ուսանող վեց ամսից ավելի մնացել են անելանելի վիճակում՝ չկարողանալով աշխատանք գտնել և միաժամանակ ուսանել: Այս առթիվ Չեխոսլովակիայի Հայ ուսանողների միության վարչության նախագահ Հ. Լորիկյանը և քարտուղար-գանձապահ Վ. Նիկողոսյանը կոչ են հրապարակել սփյուռքահայ մամուլում՝ ներկայացնելով Պրահայի հայ ուսանողների դժվարությունները և հայրենակիցներին խնդրել են սատար կանգնել նրան⁴⁸:

Ավելորդ չենք համարում համառոտ անդրադառնալ Պրահայում ուսանած հայ ուսանողներից մի քանիսի գործունեությանը, որոնք որոշակի կարևորություն են ունեցել Մփյուռքի գրական և հասարակական պատմության մեջ և որոնք մեծ մասամբ անձանթ են արևելահայ գրեթե բոլոր սերունդներին: Ուսանողների կենսագրացանկը տալիս ենք այբբենական կարգով.

Հովհաննես Ակինյան (1905, Բաթում– 30. I. 1935, Փարիզ), բանասեր Ներսես Ակինյանի եղբորորդին, 1928-ին ընդունվել է Պրագայի համալսարան՝ քիմիայի գծով: Եղել է Պրահայի Հայ ուսանողական միության եռանդուն անդամներից, «Հառաջի» և «Հուսարբերի» թղթակիցը Պրահայում: Նա սերտ կապեր է հաստատել Չեխոսլովակիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդ և ձերականոյտի նախագահ Սուկուրի հետ: Հայ համայնքի կողմից հանդիպել է նախագահ Մասարիկին և խոսել Հայ Դատի մասին: Մի քանի անգամ էլ այցելել է Չեխոսլովակիայի արտաքին գործերի նախարար Բենեշին՝ հիշեցնելով հայ-չեխական բարեկամության մասին: Այդ առթիվ Կահիրեի «Հուսարբերում» հանդես է եկել հոդվածով՝ նվիրված Մասարիկին: 1931-ին հեռացել է Պրահայից⁴⁹:

Արշալույս Աստուածատրյան (1883, Քանաքեռ – 1973, Բելգրադ), հասարակական գործիչ, լայնորեն աշխատակցել է «Հայրենիք» ամսագրին: 1969-ին հրատարակել է «Սարդարապատի հերոսամարտին պատմաշինարարությունը» աշխատությունը, որով ջախջախել է Հարություն Թուրշյանի «Սարդարապատի հերոսամարտը» (Երևան, 1965) գիրքը:

⁴⁷ Մեր աշխատակիցներու նամակները, էջ 20–21:

⁴⁸ Փրակայի կարոտ ուսանողներու կոչը.– «Հայրենիք», 9. II. 1932:

⁴⁹ Հովհաննես Ակինյան.– «Ալիք», 19. II. 1935:

Մուշեղ Թամրազյան (1897, Շուշի – 1944, Համադան), լրագրող: 1910-ականների վերջից Թանատոս ծածկանունով աշխատակցել է հայ մամուլի բազմաթիվ օրգաններին:

Նիկոլ (Նիկողայոս) Բադայան, ծնունդով Անդրկովկասից, ուսանել է Պրահայի համալսարանի առևտրական դպրոցում, Պրագայի և Ն. Բ. ծածկանուններով աշխատակցել է դաշնակցական մամուլին: Աքսորվել է Սիբիր, որտեղ և մահացել է:

Նիկոլ (Կուռո) Թարխանյան, Փետրվարյան ապստամբության հայկական գործերի հրամանատար: Մահացել է Բուխարեստում:

Հովհաննես Հախնազարյան (1900, Ագուլիս – 1978), 1922–1932 թթ. բնակվել է Պրահայում, պատմագիտության և փիլիսոփայության դոկտորի կոչում է ստացել Պրահայի համալսարանում, որից հետո չորս տարի նույն համալսարանում ուսանել է համեմատական լեզվաբանություն և դասական լեզուներ⁵⁰: Երկար տարիներ եղել է հայկական դպրոցի տնօրեն Թեհրանում: Որդին՝ ճարտարապետ Արմեն Հախնազարյանը, հետմահու հրատարակել է հոր «Գողթան գավառ» աշխատությունը (Թեհրան, 1991):

Հարություն Ղարիպյան (ծն. 1895, Իգդիր), մշակութային գործիչ և բանաստեղծ: Ի թիվս ժամանակի հայ մամուլում հրատարակած ստեղծագործությունների, մշակել է նաև չեխական բանահյուսության երկու նմուշ՝ «Օուլյ կինը (չեխական ավանդություն)»⁵¹ և «Ճպուռն ու մրջյունը (չեխական առակ)»⁵²:

Մանվել Մարության (1901, Վան – 1986, Լոս Անջելես), դերասան և գրող, որը, ինչպես նշվեց, շատ կարճ ժամանակ է ուսանել Պրահայում: Ավարտելով ուսումը Վիեննայի դրամատիկական ակադեմիայում՝ կազմել է սեփական թատերախումբ, շրջել աշխարհի հայաշատ քաղաքներում, ներկայացրել դասական թատերագրության բազմաթիվ նմուշներ՝ ստանձնելով կենտրոնական դերերը: Նկարահանվել է նաև իրանական կինոյում:

Վահան Մինախորյան (1884, Գանձակ – 1944, Բելգրադ), հայ մամուլի աշխատակից, գրել է «1915 թվական. արհավիրքի օրեր» (Վենետիկ, 1949) արժեքավոր հուշագրությունը:

Բադրասար (Բադրիկ) Մինասյան (1903, Ղարադաղ – 1976, Թեհրան), Պրահայում ուսանել է բնագիտություն: ՀՀԴ ականավոր գործիչ Բրանում, հեղինակը հետմահու հրատարակված «Հայաստան, հայ ժողովուրդ և Հայկական Դատ» վերնագրով գրքի, որ հրատարակել է դուստրը՝ ամերիկահայ պատմաբան Ռուբինա Փիրումյանը:

Օննիկ Մխիթարյան, Վանի հերոսամարտի ականատես-դեկավար-պատմիչներից: Որպես խմբագիր աշխատել է Բուլղարիայում: Աքսորվել է Սիբիր, որտեղ և մահացել է:

Ստեփան Նավասարդյան (1896, Էջմիածին, մահ. Ֆրանսիա), 1925-ին Պրահայում հաջողությամբ ավարտել է իրավաբանական դասընթացը: Օժտված է ե-

⁵⁰ Հ. Հ ա խ ն ա գ ա ր յ ա ն. Գողթան գավառ, Թեհրան, 1991, էջ 4:

⁵¹ Տե՛ս «Նավասարդ», 1924, հունվար-փետրվար, էջ 154:

⁵² Տե՛ս «Նավասարդ», 1925, էջ 344:

ղել երգելու ձիրքով: Պրահայի կոնսերվատորիայի դասախոսները հիացել են նրա ձայնով՝ զարմանալով, թե ինչու հայերը միջոցներ չեն տրամադրում շնորհայի երիտասարդին՝ ձայնը մշակելու համար: Նավասարդյանի երգեցողությամբ հիանալու առիթն են ունեցել Երևանի, Իրանի, Բաղդադի, Հալեպի, Բեյրութի և Վիեննայի հայերը, սակայն երգիչը միջոցներ չի գտել՝ Իտալիայում իր երաժշտական կարողությունները զարգացնելու համար⁵³:

Եփրեմ Սարգսյան (մահացել է 1970-ին, Լոս Անջելեսում), հաստատվելով ԱՄՆ-ում՝ բանաստեղծություններով և թարգմանություններով աշխատակցել է սփյուռքահայ մամուլին:

Ռուբեն Վարդանյան (1893, Վանի նահանգի Արճակ գյուղ – 1958, Բուենոս Այրես), նույն ինքը՝ արգենտինաբնակ գրող Ռեն, Պրահայի համալսարանն ավարտել է 1929-ին և Չեխոսլովակիայում է մնացել մինչև 1930 թվականը: Մի շարք գրքերի հեղինակ է:

Ահարոն Տատուրյան (1887, Նիկոմեդիայի Օվաճրգ գյուղ – 1965, Փարիզ), եղել էր Պոլսի «Մեհյան» հանդեսի խմբագիրներից, հետագայում՝ ճանաչված ֆրանսաբնակ բանաստեղծ:

Անդրե Տեր-Օհանյան (1899, Թավրիզ – 1980, Թեհրան), խմբագիր, հրապարակախոս: Անդրե Ամուրյան ծածկանունով աշխատակցել է դաշնակցական մամուլին: Իրանում և ԱՄՆ-ում խմբագրական պաշտոններ է ունեցել, ուսումնասիրել է ցարական կառավարության ժանդարմերիայի արխիվները Կալիֆոռնիայում:

Գեղամ Քյոսեյան (1901, Երիզայի Մեծ Արմտան գյուղ – 1934, Պրահա), տնտեսագետ, ուսանել է համալսարանի առևտրական բաժնում: Գեղամ Շողակաթ ծածկանունով տնտեսագիտական բնույթի հոդվածներով աշխատակցել է ԱՄՆ-ի «Հայ վաստակ» պարբերականին և Չեխիայի հայերի մասին թղթակցություններով՝ Փարիզի «Հառաջին»: Բազմակողմանի ընդունակությունների տեր, մի շարք լեզուների (ֆրանսերեն, անգլերեն, չեխերեն, գերմաներեն, թուրքերեն, պարսկերեն, արաբերեն) հմուտ այդ երիտասարդը բազմիցս դիմել է Հայաստան վերադառնալու, սակայն միշտ մերժվել է⁵⁴:

Պրահայում իրենց կրթությունն ավարտել են հետևյալ հայորդիները՝ Բաղդասար Ճերմակյանը՝ առևտրական բաժնից, Վարդգես Հակոբյանը, Վասիլ Իսահակյանը, Բարկեն Ռասմաճյանը՝ Չեխական տեխնիկական դպրոցից, Կարոլինյան համալսարանում ուսանած Մարտիրոս Աղապապյանը (դեղագործություն), Գարեգին Երեցյանը, Գ. Արարատյանը (բժշկություն), Հայկ Ասատրյանը (փիլիսոփայություն) և այլք⁵⁵:

⁵³ Հայ ուսանողի մը հաջողությունը.– «Մարմարա», 2. V. 1925: Մանվել Մարոյանը ևս իր հուշերում գրել է, թե ինչպես մի անգամ Պրահայի հայ ուսանողական միությունը նամակ է ստացել Վիեննայի հայ համայնքի վարչությունից, խնդրելով երգեցիկ և ասմունքող ուսանողների ուղարկել իրենց մոտ՝ երեկոյթ-պարահանդեսին մասնակցելու: Միությունը ուղարկել է Մարոյանին և Ստեփան Նավասարդյանին (տե՛ս Մ. Մ ա Ր ո լ թ յ ա ն. Երբ իջնում է վարագույրը, էջ 7):

⁵⁴ Գեղամ Շողակաթ.– «Հայրենիք», 18. 02. 1934:

⁵⁵ Տ Ն ք թ. Ն շ ա ն Մ ա Ր տ ի Ր ո ս յ ա ն. Փրակայի հայ ուսանողները.– «Ազատ միտք», 31. X. 1936:

Բնական է, որ ոչ բոլոր ուսանողների ընտրությունն է հաջող եղել, նրանց շարքերում հայտնվել են նաև անազնիվներ և բախտախնդիրներ: Բացի այդ, հասուն տարիքի ուսանողների, հատկապես նախկին զինվորականներին ընտրելն իրեն չէր արդարացնում: Բնորոշ է Վանուշ Հախնազարյանի պարագան, որը Հայաստանում վեց կոմունիստ էր սպանել և փախել Պարսկաստան, իսկ այստեղից էլ իր պատկանած կուսակցության՝ Հայ Հեղափոխական Դաշնակցության կողմից ուղարկվել էր Չեխոսլովակիա՝ ուսանելու: Պրահայում այս Վանուշը մի չէիս վաճառականից 40 հազար կրոն արժողության ապրանք է գողացել և կրկին փախել Պարսկաստան, իսկ չեխական ոստիկանությունը սկսել է որոնել նրան⁵⁶: Նա նաև ժխտական դեր է ունեցել 1934–1935 թթ. ուսումնական տարվա սկզբում Պրահայի համալսարանում հայերենի դասավանդումը դադարեցնելու գործում՝ որպես արդյունք Նշան Մարտիրոսյանի հետ մրցակցության⁵⁷:

Պրահայում սովորած հայորդիներից Չեխոսլովակիայում համեմատաբար երկար է մնացել Մարտիրոս Աղապապյանը: 1915-ին թուրքական բանտերի և Տեր-Չորի անապատների փորձություններին դիմացած այս հայորդին իր դառնադետ կենսագրությունը ներկայացրել է 1957-ին Բեյրութում Մարտիրոս Սասունցի գրչանունով հրատարակած «Սև օրագիր» գրքում: Սա բացառիկ արժեք ունեցող հուշագրություն է Մեծ Եղեռնի և հետագա տարիների մասին մի շարք վայրերում՝ Կ. Պոլիս, Հայաստան, Արմաշի երկրագործական վարժարան, այնուհետև՝ Վիեննա, որի համալսարանի փիլիսոփայության բաժնում կես տարի սովորելուց հետո, չդիմանալով նյութական նեղություններին, նա տեղափոխվել է Պրահա՝ իր բարեկամ Երվանդ Քոչյանի միջոցով: 1923–1930 թթ. նա ուսանել է Կառլովյան համալսարանի դեղագործական բաժնում: «Առաջին հայ ուսանողն էի, որ հանդիսավորապես վկայական կ'առնեի Փրակա գացողներուն մեջ՝ «Մագիստրոս դեղագործության» տիտղոսով. իմ կյանքիս ամենեն գեղեցիկ և երջանիկ օրն էր այդ օրը: ...85 հոգի ավարտողներուն մեջ առաջինն էի. անկե ետք չեխուհիները ծանոթ ու անծանոթ զիս ծաղիկներու մեջ թաղեցին՝ շնորհակալական խոսքեր ուղղելով ինձի: Բայց երբ մոտեցա վկայականս առնելու, համալսարանի գանձանակին մեջ պետք էր, որ ես կոկիկ գումար մը նետեի ընկալյալ սովորության համաձայն: Ինձի հետ ավարտողները 50, հարյուր և ավելի ոսկիներ կը նետեին, պետական գանձանակին մեջ: Ես այդ օր գրպանս քսան չեխական քուրոն (կրոն – Ա. Բ.) ունեի... Ես այդ փոքրիկ գումարը այնպես մը նետեցի գանձանակին մեջ, որ մարդ չտեսներ...: Իսկ այդ իրիկուն ես անոթի փորով քնացա»⁵⁸: Մի կարճ ժամանակ բախտը փորձելով Ֆրանսիայում և անհաջողության մատնվելով՝ Աղապապյանը 1928-ին դարձյալ վերադարձել է Չեխոսլովակիա ու համալսարանի պրոֆեսորների օգնությամբ իր մասնագիտությամբ աշխատանք գտել Նովե Բենակտի քաղաքում: Այստեղ նա մնացել է երկու տարի: Հանդիպելով իր դասընկերուհի Վերային, որի հայրը նախարար է եղել և

⁵⁶ Փրակապի. Չեխոսլովաքիո հանրապետության տարեդարձին առթիվ. – «Արևելք», 28. X. 1933:

⁵⁷ Հայերենի ուսումը դադարած Փրակայի համալսարանի մեջ. – «Հայրենիք», 9. I. 1935:

⁵⁸ Մ. Մ ա ս ու լ ն ց ի. Սև օրագիր, էջ 268:

հայերին համակիր, Մարտիրոսը տեսակցել է վերջինիս: Նախարարը նրան ասել է. «Կարդացած եմ Հայերու ջարդերու և անոնց կրած շատ մը տանջանքներու մասին... Ինչո՞վ կրնամ ձեզի օգտակար ըլլալ... Պետական վերջին քննություններուն ժամանակ, դուք օտարական մը ըլլալով և նախապես ալ մեր լեզվին անտեղյակ ըլլալով, 85 քննությունը տվող ավարտողներուն մէջ դուք առաջինը հանդիսացած եք. այդ ձեր ազգին ընդունակության ապացույցն է»⁵⁹: Աղապայայանը նրան խնդրել է օգնել՝ չեխահայաստակ դառնալ, և այս ազդեցիկ պաշտոնյայի շնորհիվ 15 օրում կարգավորվել է Մարտիրոս Աղապայայանի՝ Չեխիայի քաղաքացի դառնալու հարցը: 1935-ին նա ամուսնացել է չեխուհու հետ: Ավելի տաք կլիմայով երկրում ապրելու նպատակով 1937-ին Աղապայայանը կնոջ հետ տեղափոխվել է Իրան, այնուհետև հաստատվել Բեյրութում: Նրա հետագա ճակատագիրը մեզ անհայտ է. 1967-ի դրությամբ արդեն հանգուցյալ էր:

Ինչպես վկայել է Մ. Մարությանը, հետագայում Պրահայում մնացած հատուկ ենտ հայերին, սոցիալիստական կարգեր հաստատվելուց հետո, արտոնել են Միբիր կամ գնդակահարել⁶⁰: Աքսորյալներից ոմանք հետագայում վերադարձել են Պրահա:

Ամփոփենք: Չեխոսլովակիայի պետական հովանավորությամբ Պրահայում ուսանած հայորդիներն աստիճանաբար ցրվել են գանազան երկրներ: Մի շարք գործոններ (կուսակցական շահերից առաջնորդվելը, ուսանողների մի զգալի մասի ոչ հաջող ընտրությունը, հայության հետ կապ չունեցող երկրի իրողությունը, այդ երկրի կրթական հաստատության պայմանները) նպաստեցին, որ ձեռնարկն ամբողջությամբ չկայանա և չտա շոշափելի արդյունքներ: Բավական է նշել, որ վեց տասնյակի հասնող ուսանողներից հազիվ 15 հոգու է հաջողվել ավարտել համալսարանական ողջ դասընթացը: Այնուամենայնիվ, անկախ դրանից, հայ հասարակական կյանքի և մանկավարժության պատմության մէջ Պրահայի հայ ուսանողների պատմությունը կմնա որպէս մի բացառիկ երևույթ, երբ մի քաղաքական կուսակցություն օգտվել է մի երկրում ստեղծված կրթական բարենպաստ պայմաններից և փորձել մեծ թվով հայրենակիցների տալ բարձրագույն կրթության:

АРМЯНСКИЕ СТУДЕНТЫ ПРАГИ (1920-1930-е годы)

АРЦВИ БАХЧИНЯН

Резюме

После Первой мировой войны правительство новосозданной Республики Чехословакии принимало группы из разных стран для учебы в университетах страны за

⁵⁹ Նույն տեղում, էջ 281:

⁶⁰ Մ ա ն ի ե լ Մ ա ր ը յ ա ն. Ի նչ է պատահում բեմի վրա, բեմի ետև և բեմից դուրս, Անթիլիաս, 1986, էջ 79:

государственное пособие. Его целью, скорее всего, было установление контактов с разными государствами и культурами мира. Армянская революционная партия Дашнакцутюн, которая фактически являлась правительством Республики Армении в ссылке, вела переговоры с Чехословацким государством и подписала соглашение для принятия армян в качестве студентов. В результате в 1923 г. 50 армян из разных стран поступили на разные факультеты Пражского университета. Прием студентов продолжался и в следующие годы. Армяне в Праге создали студенческие организации и пытались организовать жизнь своего рода общины. Многие сотрудничали с армянскими газетами разных стран, писали статьи о Чехословакии и ее культуре. Теоретические труды первого президента Чехословацкой республики Томаша Масарика имели большое влияние на армянских студентов. Однако лишь некоторые из армянских студентов завершили учебу в Праге, так как большинство не смогло приспособиться к условиям жизни в Чехословакии и оставило учебу. Армянские студенты Праги не состоялись как коллективная сила, однако стали символом армянского присутствия в столице Чехословакии на несколько лет.

ARMENIAN STUDENTS OF PRAGUE
(The 1920s–1930s)

ARTSVI BAKHCHINYAN

S u m m a r y

After the First World War the government of the newly-established Republic of Czechoslovakia admitted groups of students from all over the world for studying at various universities of the country on state scholarship. The aim seems to have been to build contacts with different countries and cultures. The Armenian Revolutionary Federation (Dashnaktsutyun), actually, the government of the Republic of Armenia in exile, negotiated with the government of Czechoslovakia and signed an agreement about the admission of Armenians as students. Following this, fifty Armenians from different countries were admitted to various schools of Prague University in 1923. This procedure continued in the next few years. Armenians in Prague established student organizations and tried to instill a sense of community to their lives. Many of them became regular correspondents to the Armenian press of different countries and wrote articles about Czechoslovakia and her culture. Theoretical writings of the first president of the Republic of Czechoslovakia, Tomáš Masaryk had a big influence on Armenian students. However, only a few Armenian students finished their studies in Prague, since most of them did not fit into the environment in Czechoslovakia. Armenian students of Prague had no success as a collective force, but became a symbol of Armenian presence in the capital of Czechoslovakia for several years.